


# ԵՂԵՌՆԻ ԼԵԶՈՒՆ

Ստանպուլահայ գրողներ ինչպե՞ս լրած են աղետը:

**ՅԱԿՈԲ ՄՆՁՈՒՐԻ**  
**(1886-1978)**



# ԿԱՐՊԻՍ ՃԱՆՃԻԿԵԱՆ (1920-1946)



ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

հայրս

մայրս

արաբկիբ

թեքիրտաղ

իսթանպուլ

հայրապոլ

դամասկոս

երուսաղէմ

իսթանպուլ

սամաթիա

մարմարա պողոտայ թիւ 55

քսան տարուայ

վարձակալը այս տունին

Ծնած է Սամաթիա՝ 1920-ին: Ուսումը՝  
Սահակեան-Նունեան, Կեդրոնական եւ  
Իտալական վարժարաններէ: 1943-ին,  
հիւժախտը կու գայ զինքը վերջնականօրէն  
հեռացնելու դպրոցէն:

Հրատարակուած առաջին բանաստեղծութիւնը՝  
«Օրէ օր», լոյս կը տեսնէ Բ. Թեւեանի  
«Պատկեր»ին մէջ՝ 1939-ին, Արաքսի Սողոմոն  
ծածկանունով: Աւելի յետոյ կաշխատակցի  
«Երջանիկ»ին, Աւետիս Ալիքսանեանի  
«Պատկեր»ներուն, «Նոր Օր» շաբաթաթերթին  
եւ «Ժամանակ» օրաթերթին: Իր մահուրնէ  
յետոյ, կարգ մը անտիպներ ալ լոյս կը տեսնեն  
«Այսօր»ի, «Ճառագայթ»ի եւ «Ժամանակ»ի մէջ:

Հանրութեան ծանօթ իր այս գործերէն զատ, կը  
ձգէ անտիպներ, հայերէն եւ թրքերէն, ինչպէս  
նաեւ ձեռագիր խմորատիպ հանդէս մը  
«Արաքս», զոր կը հրատարակէր  
ուսանողութեան օրերուն:

Տիրօտիզմ, տատախիզմ, սիրոճէպիզմ,  
էմբրէսիոնիզմ փոխն ի փոխ իր նախընտրած  
դպրոցները կըլլան եւ միսթիք ու ռոմանթիք  
վարպետներուն տեղը կը գրաւեն Մարինէթթի,  
Չարա, Աբոլլիներ եւլն.: Իր առաջին պտուղը  
կու տայ 1942-ին՝ «Պայքըս» բաւական  
իրապաշտ, թրքերէն բանաստեղծութեանց  
հաւաքածոն:

Ճանճիկեան կը մեռնի 1946-ին, Ազգային  
հիւանդանոցի մէջ:



# ԵՐՈՒԱՆԴ ԿՈՊԷԼԵԱՆ (1923-2010)



1923-ին ծնած է Ռուսելիիսար:Նախակրթութիւնը՝  
Թաղէնուսեան, ապա Էսսեան վարժարաններէն:  
Մօրեղբօրը գրադարանը եղած է ինքնազարգա-  
ցումի վայր: Ճանչցած ու բարեկամացած է Ճանճիկեանին:  
Կոպէլեանի բանաստեղծութեանց առաջին ժողովածոն կը

հրատարակուի 1948-ին,

«Երանի՛ թէ» խորագրով, որմէ ետք կը հարցաքննուի  
նստիկանութեան կողմէ: Կոպէլեան 1953-

ին կը մեկնի Պէյրութ, ընդառաջելով հրաւերին նոր  
հիմնուած «Այգ» օրաթերթի, որու խմբագի-  
րի պաշտօնը կը ստանձնէ: Իր պատմուածքները կ'երեւին

Պէյրութի գրական մամուլին մէջ: 1954-

ին կը վերադառնայ Պոլիս: 1957-

ին դարձեալ Պէյրութ է, ուր երկար տարիներ մաս կը կազմէ


«Սփիւռք» շաբաթաթերթի եւ

«Մեւան» հրատարակչութեան խմբագրական խորհուրդներուն:

Իր կեանքի վերջին տարիներուն Կոպէլեան աշխատեցաւ

«Ակօս» ի մէջ, ուր հրատարակուեցան իր յօդուածներն  
ու ուսումնասիրութիւնները, հայերէն ու թրքերէն:

2010-ին կնքեց իր մահկանացուն: Մարմինը ամփոփուած  
է Պալըքլըի ազգային գերեզմանատան մէջ:




Երբ մենք հետաքրքիր կը դիտելինք անշարժ ու անխօս դեմի լեռներուն նայող-դիտող աղբահաւաքն ու քրջահաւաքը, նկատեցինք որ Խորէն Ադան ծոցէն թաշկինակը հանելով արցունքները կը սրբէր:

Խորէն Ադան կու լար:

Քիրիվօն ալ, աչքերը չէր սրբէր թէեւ, սակայն չոր ու արեւախանձ երեսներն ի վար իջնելով թաւ ու խոզանակի նման ցից, խիտ պեխերուն մէջ կորսուող լեղի արցունքը կը լիզէր մերթ ընդ մերթ:

Տղաքը, որոնք երբեք չափահաս մարդոց լացը չէին տեսած մինչեւ այդ օր, անակնկալի եկած՝ նախ շուարած մնացին միջոց մը, վերջը ամէն մէկը վազեց իր տունը լուր տալու համար որ Քիրիվօն ու Խորէն Ադան լտուտենիին տակ նստած կու լային:

Ես ալ տունը վազեցի, լուրը տալու համար մօրս:




-Ես քեզի չէի<sup>օ</sup> ըսած. ըլլալիքը ասիկա էր:

-Խօսք ըսածդ սոխի պէս է, պատասխանեց մայրս. քանի կեղուես՝ տակէն աւելի կծուն կ'ելլէ...:

-Ազգի՛ն գէշը չ'ըլլար. մարդուն գէշը կ'ըլլայ: Ամէն ազգի մէջ աղէկն ալ կայ, գէշն ալ կայ:

Ես, առանց բան մը հասկնալու անոնց փոխանակած այդ խօսքերէն, հարցական ականարկներով մէկ հօրս երեսը կը նայէի, մէկ՝ մօրս, սա լուռ հարցումը աչքերուս մէջ.

-Ինչո՞ւ...:



-Հիմա անոնք անպայման հին օրերէն խօսեցան, տխուր ու ցաւոտ օրերը յիշեցին:  
Դուք այդպէս օրեր չտեսնէք եւ անոնց պէս չափահաս տարիքի մէջ լացնելիք ցաւ  
չունենաք:

Ու փաթթուելով յանկարծ ինծի, ինքն ալ լալու պէս եղաւ, յետոյ հօրս ձայնեց պարտէզ.

-Յարո՛ւթ, տղան քովդ քեզի օգնելու կու գայ:


Հազիւ թէ ես ուղղուած էի դէպի տան արտաքին դուռը՝ պարտէզ ելլելու համար,  
առանց ետեւ դառնալու զգացի, որ մայրս ալ իր գոգնոցին ծայրը աճապարանօք կը  
տանէր աչքերուն, սրբելու համար արցունքները, որոնք վստահ էի որ Քիրիվոյին ու  
Խորէն Աղայի արցունքներուն համն ունէին...



# ԱՆԴԱՆ ԷՕԶԷՐ (1927-1994)

Ծնած է Ստամպուլ: Չափաճոյ ու  
արձակ գործերով աշխատակցած է  
ստանպուլահայ գրական  
մամուլին: Բանաստեղծ ու  
արձակագիր:  
Հրատարակութիւններն են՝ «Ահա  
այսպէս» (1953), «Առանձնութիւն»  
(1984), «Ծածուկ  
իրականութիւններ» (1984), «Եւ»  
(1990):





Պահապանը անհամբեր, ձեռքը՝ Ազնիւին թելէն բռնելու համար երկարեց.

-Քալէ նայինք տիկին ըսաւ, շատ երկարեցիր, քալէ մինչեւ ոստիկանատուն:

Ազնիւ ջղային շարժումով մը թելը քաշեց պահապանին ձեռքէն.

-Ես գիտեմ քալելը... քալելէն ալ չեմ վախնար, ատենին ես մինչեւ անապատներն եմ քալեր...

Սրապիոն՝ փոթորիկի մը ենթարկուած ըլլար կարծես՝ սիրտը նորէն բերանը եկաւ.

-Ինծի նայէ՛, ըսաւ դողահար, իենթ ու իելառ բաներ չխօրթես հա՛, հասկցա՞ր...

Ազնիւին ատելութիւն փսխող նայուածքները ալ աւելի հրկիզեցին Սրապիոնին դողահար սիրտը:



-Ծօ տղաս, դուն խօսք չե՞ս հասկնար ծօ՛,  
ջղայնացած կը պոռար Յովսէփ, անոնք մարդ  
ե՛ն մարդ...:

Կարօն րոպէ մը զարմանքէն քարացաւ, լուռ  
կեցաւ այդպէս:


-Հապա մենք ի՞նչ ենք վարպետ, մենք ալ մարդ  
չե՞նք...:

-Մե՞նք...: Ի՞նչ կը կարծէիր ծօ տղայ, մենք մարդ  
չենք, մենք մարդուկ ենք, մարդո՛ւկ...:

# ՎԱՐԴԱՆ ԿՈՄԻԿԵԱՆ (1915-1998)

Ծնած է Ատաբազար:  
Ատամնաբոյժ էր: Վարած է  
ուսուցչութեան պաշտօն  
ստանպուլահայ վարժարաններէ  
ներս: Իր նորավէպերով  
աշխատակցած է գրական  
մամուլին: Հրատարակութիւններն  
են՝ «Բարի եկար, Սէ՛ր», «Համրիջի  
հատիկներ»:






Այսպես էին այդ օրերը եւ այսօր ա՛լ չկան, որովհետեւ պատերազմները արթնցուցին մարդոց առհասկան բնագղները, եղբայրները զինեցին իրարու դէմ եւ դրացիները թշնամացուցին իրարու, ազգերը ազգերու ոսոխ ըրին եւ բարի, շինարար ու խաղաղ շինականները բերին լեցուցին մեծ քաղաքներու անձուկ տուններուն եւ սենեակներուն մէջ, իրարու վրայ՝ կէս կուշտ, կէս անօթի նորէն ծայրէն սկսելու համար կեանք մը, որ ա՛լ ապագայ չունի, ցրուած ըլլալով չորս հովերուն:


Ասոնք ո՞ւր պիտի գտնեն անգամ մըն ալ զիրար՝ մեռնելէ առաջ:

-Մենք դուն էս չունէանք, կ'ըսէր մեծհայրս, Պօշնակը, Չերքէզն ու Ապագան, Հայն ու Տաճիկը գիրկ գիրկի էանք՝ չարշուն, փողոցը, դաշտերը: Մինակ եկեղեցինիս զատ էր (եկեղեցին առնելով իբրեւ աղօթատեղի):



-Մեղք է Հաճիտու, շատ չ'տի լաս մեռելին ետեւէն, գոնէ դուն  
կրնաս անոր գերեզմանին վրայ երթալ... մենք ի՞նչ ընինք...:  
Ո՞ւր են մերիններուն գերեզմանները:

# ՔԵՄԱԼ ԹԱՀԻՐ (1910-1973)



**ԵԱՇԱՐ ՔԵՄԱԼ  
(1923-2015)**





# ՕՐՀԱՆ ՔԵՄԱԼ (1914-1970)



# ԶԱԻԷՆ ՊԻՊԵՌԵԱՆ (1921-1984)

